ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «30» 08 2023թ № 1616-Լ

ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

հրամայում եմ.

1. Սահմանել մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածման յուրաքանչյուր գործընթացի մշտադիտարկման չափանիշներն ու կարգը, մշտադիտարկման մեթոդներն ու ուղեցույցները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի օգոստոսի 30-ի
N 1616-Լ հրամանի

ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների (այսուհետ՝ ԳՁՕ) գործածման յուրաքանչյուր գործընթացի մշտադիտարկման ընթացակարգը:

2. ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

2. ԳՁՕ-ների հետևանքով մարդու առողջությանը, շրջակա միջավայրին, գյուղատնտեսական նշանակության հողերին սպառնացող հնարավոր անբարենպաստ ազդեցությունը գնահատելու նպատակով իրականացվում է մեկուսացված համակարգերում ԳՁՕ-ի գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև տեղափոխման, արտահանման և ոչնչացման անընդհատ և պարբերական գնահատում:

3. Մշտադիտարկումն իրականացվում է յուրաքանչյուր ԳՁՕ-ի և դրա գործածության նկատմամբ՝ գիտականորեն հիմնավորվածության և թափանցիկության ապահովմամբ:

4. Մեկուսացված համակարգում ԳՁՕ-ների գործածման յուրաքանչյուր գործընթացի մշտադիտարկումն իրականացնում է լիազոր մարմնի կողմից հաստատված ԳՁՕ-ների հարցերով փորձագիտական խումբը:

5. Յուրաքանչյուր գիտահետազոտական և փորձացուցադրական աշխատանքի տևողությամբ և բնույթով պայմանավորված փորձագիտական խմբի կողմից մշտադիտարկումն իրականացվում է աշխատանքների տարբեր փուլերում՝ գիտահետազոտական աշխատանքների սկզբում, ընթացքում՝ ըստ անհրաժեշտության 3-5 անգամ և աշխատանքների ավարտին:

6. Մշտադիտարկման իրականացման ժամանակացույցը և պլանը կազմում է փորձագիտական խումբը՝ պայմանավորված գիտահետազոտական աշխատանքի առանձնահատկությամբ:

7. Մշտադիտարկման իրականացման մասին փորձագիտական խումբը հեռախոսակապով կամ էլեկտրոնային կապի միջոցով մեկ աշխատանքային օր առաջ տեղեկացնում է լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպությանը:

8. Գիտահետազոտական աշխատանքների ընթացքում մեկուսացված համակարգերի մշտադիտարկումը իրականացվում է հետևյալ չափանիշներով՝

1) մեկուսացված համակարգի պատշաճ մեկուսացումը շրջակա միջավայրից,

2) տնկված կամ ցանված բույսի նույնականացումը գիտահետազոտական ծրագրով հաստատված բույսի տեսակին,

3) պատահական տրամախաչումը կանխելու համար այլ մշակաբույսերի, այդ թվում՝ միևնույն տեսակին պատկանող, նույն տեսակի վայրի ազգակից բույսերի, մոլախոտային բույսերի կամ այլ ազատ աճող բույսերի առկայությունը,

4) այլ բույսերից մեկուսացման պահանջների պահպանումը,

5) հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումների իրականացումը,

6) ԳՁՕ պարունակող բուսական օրգանիզմների մշակության և բերքահավաքի ընթացքում օգտագործվող գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների պատշաճ մաքրումն ու ախտահանումը,

7) բերքահավաքի ընթացքում և դրանից հետո կենսաանվտանգության պահանջների պահպանումը,

8) գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված աշխատակիցների կենսաանվտանգության պահանջներով առաջնորդվելը,

9) ԳՁՕ-ների տեղափոխման, արտահանման կամ ոչնչացման իրականացումը:

3. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ

9. Մշտադիտարկման մեթոդներն են՝

1) հարցումները,
2) տվյալների հավաքագրումը
3) փաստաթղթերի ուսումնասիրությունը,
4) դիտարկումը
5) լաբորատոր փորձաքննությունը:

10. Մշտադիտարկման ուղեցույցները ներառում են հետևյալ միջոցառումները՝

1) գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված աշխատակիցների շրջանակներում հարցազրույցի իրականացման միջոցով գիտահետազոտական աշխատանքների առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվության տիրապետում,

2) հետազոտության առարկա հանդիսացող օբյեկտի, մեկուսացված համակարգի վերաբերյալ տվյալների հավաքագրում,

3) գիտահետազոտական ծրագրի, դրան կից առկա փաստաթղթերի, այլ կազմակերպությունների կողմից իրականացված նմանատիպ հետազոտությունների փաստաթղթերի ուսումնասիրություն,

4) մեկուսացված համակարգում առկա լաբորատոր սարքերի, սարքավորումների, գյուղատնտեսական գործիքների, նյութերի, կենսաանվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ միջոցառումների, ինչպես նաև իրականացվող գիտահետազոտական և փորձացուցադրական աշխատանքների ընթացքի նկատմամբ դիտարկում,

5) գիտահետազոտական աշխատանքների մեկուսացված համակարգում ի հայտ եկած հիվանդությունների հարուցիչների, վնասատուների և պայքարի միջոցառումների իրականացման նկատմամբ դիտարկում,

6) ստացված ԳՁՕ-ների նմուշների փաթեթավորման, տարավորման, պիտակավորման, տեղափոխման, արտահանման կամ ոչնչացման նկատմամբ դիտարկում,

7) ըստ անհրաժեշտության ԳՁՕ-ների փորձանմուշների, ստացված նմուշների լաբորատոր փորձաքննությունների իրականացում,

8) դիտարկման արդյունքում հավաքագրված տվյալների հիման վրա իրավիճակի գնահատում և վերլուծություն,

9) շրջակա միջավայրի, մարդու առողջության, և գյուղատնտեսական նշանակության հողերի վրա մեկուսացված համակարգում ԳՁՕ-ների գիտահետազոտական աշխատանքների հնարավոր ազդեցությունների վերաբերյալ հաշվետվության և եզրակացության ներկայացում:

11. Դիտարկման միջոցով արձանագրվում է մեկուսացված համակարգի և գիտահետազոտական աշխատանքների փաստացի իրավիճակը:

12. Մշտադիտարկման չափանիշների հիման վրա կազմվում է դիտարկման արձանագրություն (Ձև), որը ստորագրվում է փորձագիտական խմբի անդամների, գիտահետազոտական ծրագրի ղեկավարի և կենսաանվտանգության ապահովման համար պատասխանատու աշխատակցի կողմից:

13. Յուրաքանչյուր մշտադիտարկման արդյունքում կազմված արձանագրությունը և եզրակացությունը փորձագիտական խումբը ներկայացնում է լիազոր մարմին և լիցենզավորված գիտահետազոտական կազմակերպություն:

14. Փորձագիտական խումբը մշտադիտարկման արդյունքների վրա անհրաժեշտության դեպքում լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ:

Ձև
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թվականի -ի
N -Լ հրամանի

ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Գիտահետազոտական կազմակերպության անվանումը, գտնվելու վայր

---

2. Գիտահետազոտական ծրագրի անվանումը

---

3. Գիտահետազոտական ծրագրի ղեկավարը

---

4. Մեկուսացված համակարգի գտնվելու վայրը

---

5. Մեկուսացված համակարգում առկա սարքերը, սարքավորումներն ու նյութերը

6.Մեկուսացված համակարգի հեռավորությունը գյուղատնտեսական ցանքատարածություններից, անտառներից, խոտհարքներից

---

7. Մեկուսացված համակարգում փորձարկման ենթակա բույսի տեսակը, ԳՁՕ-ի անվանման (գիտական և միջազգային), գենետիկական նյութի փոխանցման փաստերի

---

8. Մեկուսացված համակարգին կից այլ բույսերի տեսակների վրա գիտահետազոտական աշխատանքների իրականացում

---

9. Մեկուսացված համակարգում առկա բույսերի վրա առկա հիվանդության հարուցիչը և վնասատուն

---

10. Պայքարի միջոցառման ժամկետը, պեստիցիդի անվանումը և սրսկման նորման

---

11. Փորձարկվող բուսական նմուշների վրա պիտակավորման առկայությունը

---

12. Գիտահետազոտական աշխատանքների ընթացքում բուսական մնացորդների, ծաղիկների, պտուղների մեկուսացման, տեղափոխման, արտահանման (փաթեթավորման պահանջին համապատասխանությունը) կամ ոչնչացման իրականացումը

---

12. Բույսերի մշակության ընթացքում և բերքահավաքի ժամանակ կիրառվող գործիքները և գյուղատնտեսական տեխնիկան, դրանց ախտահանման միջոցները

---

13. Լրացուցիչ նշումներ*

Փորձագիտական խմբի անդամներ՝

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

ստորագրություն

Գիտահետազոտական ծրագրի ղեկավար՝ ---
ստորագրություն

Կենսաանվտանգության համար պատասխանատու աշխատակից՝

ստորագրություն

* Գիտահետազոտական աշխատանքի առանձնահատկությամբ պայմանավորված գնահատման և վերլուծության համար պահանջվող այլ անհրաժեշտ տեղեկատվություն: